ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՈԼՈՇՅԱՆ

Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Վասպուրականն Արևմտյան Հայաստանի ամենամեծ նահանգներից էր՝ իր հայաշատ բնակչությամբ և հայրենասեր մտավորականներով։ Այստեղ էր, որ 1850-ական թվականներին Վարագա վանքի իր առաջավոր դպրոցով, տպարանով և գավառահայության շրջանում առաջին պարբերական «Արծուի Վասպուրականով» հանդես եկավ Մ. Խրիմյանը։ Վան քաղաքում էր, որ 1872 թ. կազմակերպվեց Ռուսաստանի օգնությամբ թուրքական ծանր լուծը թոթափելու նպատակ հետապնդող «Փրկություն ի միություն» կազմակերպությունը։ Վանում էր, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կազմակերպվեց «Սև խաչ» կազմակերպությունը, որի նպատակն էր ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության։ Ռուս-թուրքական պատերազմից հետո Վանում բացվեց ռուսական հյուպատոսարան, որի փոխհյուպատոսը Նուխիում ծնված հայազգի Կ. Կամսարականն էր, որն ամեն գնով օժանդակում էր հայերի առաջադիմությանը։ Պատերազմից առաջ Մ. Փորթուգալյանն Ալյուր գյուղում բացեց դպրոց, իսկ պատերազմի ավարտից հետո Մ. Խրիմյանի հետ հիմնեց քաղաքի վարժապետանոցը, ապա Կեդրոնական վարժարանը, որտեղ աշակերտները սովորում էին ուսուցման նոր, առաջավոր մեթոդներով։

1880-ական թվականների երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում նոր ուժով ծավալվեցին ազատագրական շարժումները՝ ստանալով համազգային բովանդակություն։ Այս ժամանակաշրջանի ազատագրական շարժման երախտավորներից է Ա. Գոլոշյանը։

Ալեքսանդր (Վարդան, Անդրո) Գրիգորի Գոլոշյանը (Հարությունյան) ծնվել է 1867 թ. հոկտեմբերի 27-ին, Թիֆլիսում։ Նրա հայրը փաստաբան էր, ուներ երեք աղջիկ և երկու տղա։ Հոր մասին Ա. Գոլոշյանը գրում է. «Քանի-քանի անգամ ես պարծեցել եմ հորովս, այո ունեմ մի հայր, որի նմանը շատ քչերն ունեն»[1]։ Ա. Գոլոշյանի մոր կողմից պապը՝ Սողոմոն Վարդանյանը, Թիֆլիսի երկաթուղու կայարանում կապալառու էր. նրա մոտ վագոններ էին բարձում ու բեռնաթափում արևմտահայ և պարսկահայ պանդուխտները։ Մանուկ հասակից Ա. Գոլոշյանը սկսեց շփվել նրանց հետ և գաղափար կազմեց պանդուխտների ծննդավայրում տիրող դժնդակ ու անտանելի կարգերի մասին[2]։ Լեոն Ա. Գոլոշյանին բնութագրում է որպես մի ընդունակ երեխայի, որի բնավորության մեջ «կար ըմբոստ ու ինքնասեր մի տաքարյունություն»[3]։ Մեզ հասած մի գրության մեջ Ալեքսանդրի հայրը վկայում է, որ նա փոքր հասակից ձգտում էր գնալ Մայր Հայաստան և շրջագայել «Հայաստանի սար ու ձոր, գյուղ և քաղաք, կարկաչուն գետերն ու լճերը, պտղատու այգիներ ու արտեր, սրբավայր վանքեր և ավերակ բերդեր, նախնյաց գերեզմաններ և մատուռներ»[4]։ Ա. Գոլոշյանը 1877—79 թթ. սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, 1880—1881 թթ. որպես գիշերօթիկ ուսանել է Տեր Հակոբյանի մասնավոր գիմնազիայում, ապա՝ պետական գիմնազիայում։ 1882—1883 թթ. նա լ-

---

1 ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ Մլի արխիվ), ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 123։

2 Նորք, 1924, էջ 332։

3 Լեո, Հայ հերոսներ, Երևան, 1920, էջ 41։

4 Մլի արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 51։

զարյան ճեմարանի սան էր։ Այնտեղ ուսանելիս Ա. Գոլոշյանը գրել է ոտանավորներ և «Լևոն վերջին» ողբերգությունը, որը բեմադրվել է ճեմարանի աշակերտների ուժերով։

Լազարյան ճեմարանի կողմից 1882—1883 ուստարում տրված ամփոփագրից երևում է, որ նա սովորել է 4 և 5 գնահատականներով, սակայն վերակացուի հետ վիճելու պատճառով զրկվել է երկրորդ կարգի պարգևից[5]։

1883 թ. հունիսի 5-ին ճեմարանի տեսուչ Քանանյանը Ա. Գոլոշյանի հորը հեռագրով հայտնում է, որ տղան թողել է ուսումը, ապա բռնվել ոստիկանության կողմից։ Հունիսի 28-ի հեռագրով Ա. Գոլոշյանի հորից նա կտրուկ պահանջում է գալ և որդուն տանել տուն։ Այսպիսով, 1883 թ. հուլիսի 2-ին ճեմարանի 4-րդ դասարան փոխադրված Ա. Գոլոշյանն ազատվում է ճեմարանից։ Ըստ արխիվային մի այլ վավերագրի, 1883 թ. հուլիսին Ա. Գոլոշյանը ճեմարանի տեսուչ Քանանյանին ասել է, թե պետք է գնա Հայաստան և նրա «թշվառ զավակներին ազատություն գտնել տա»[6]։

Անկասկած Լազարյան ճեմարանում ուսանելու տարիներին Ա. Գոլոշյանը պետք է մասնակցեր Մոսկվայի հայ համայնքի քաղաքական կյանքին։ Հենց այդ տարիներին՝ 1881—1882 թթ. է, որ Մոսկվայի հայ ուսանողների ջանքերով հրապարակ եկավ «Հայրենասերների միություն» գաղտնի կազմակերպությունը, որը հրատարակում էր հայ իրականության մեջ առաջին քաղաքական լրագիրը՝ «Ազատության ավետաբերը»։ Դրա էջերում մարտաշունչ կոչեր տպագրելու հետ միասին հայ ժողովրդին սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի հորդոր էր արվում։ Միությունը, որը ղեկավարում էր Ներսես Աբելյանը (1855—1933), գործեց մինչև 1884 թ. և փակվեց ցարական ոստիկանության կողմից։

1883 թ. հուլիսին Ալեքսանդրը հոր հետ վերադառնում է Թիֆլիս։ Սակայն, շատ չանցած, 1883 թ. դեկտեմբերին, 16-ամյա պատանին թողնում է հայրական տունը և հեռանում անհայտ ուղղությամբ, թողնելով հետևյալ գրությունը. «Այն ընկերությունը, որին երդվեցի հլու ծառա և ստրուկ լինել, հրամայում է գնալ Պոլիս և ես հնազանդվում եմ։ Ես գնում եմ առանձին անձնագրով ու կերպարանափոխ. ուրեմն, իզուր կհետևեք»[7]։ Հայրը սկսում է Կոստանդնուպոլսի իր ծանոթների միջոցով փնտրել որդուն, սակայն նրա ջանքերն ապարդյուն են անցնում, քանի որ Ալեքսանդրը սկզբում գնում է Ջուղա, որտեղ 5—6 ամիս զբաղվում է ուսուցչությամբ։ 1884 թ. նա Պարսկաստանի Սալմաստ գավառի Հավթվան գյուղում էր, որտեղից էլ հայտնվում է Վանում։ 1884 թ. մայիսի 14-ին Վանից հորն ուղղած նամակում նա գրում է. «Սիրելի հայր. ես առանց քո գիտության հեռացա Թփխիսից և այդ իհարկե ձեզ վշտացուց։ Ես մղվում էի մի անհաղթելի ուժով և չէի կարող այլապես վարվել»[8]։ Վանից Ա. Գոլոշյանը գնում է Վարագա, ապա ս. Գրիգորի վանքերը և, չցանկանալով ուրիշների վրա բեռ դառնալ, աշխատում է առավոտից մինչև երեկո՝ «թե՛ կալ է կալսում, թե՛ խոտ է հնձում և թե արտ վարում»[9]։ Վանքերում եղած ժամանակ Ա. Գոլոշյանին սկսում են այցելել Վանի երիտասարդները, որոնց թիվն օրեցօր ավելանում էր։ Մինչև 1884 թ. վերջը նա Վասպուրականում էր։ 1884 թ. հոկտեմբերի 9-ին Վանից հորը գրում էր, թե չունի ծնողներին ուղարկելու որևէ թանկագին բան, սակայն ուղարկում է «թշվառ Հայաստանի ավերակաց ողջույնը»[10]։

5 Նույն տեղում, թ. 3[illegible]։

6 Նույն տեղում, թ. 234։

7 Նույն տեղում, թ. 24։

8 Նույն տեղում, թ. 67։

9 Մ. Ն ի ր վ ա ն յ ա ն, Հեղափոխականներ Վարդան Գոլոշյան, Հ. Ագր[illegible]յան, Ժնև, 1905, էջ 11։

10 Մլի արխիվ, ֆ. 102[illegible], ց. 2, գ. 45, թ. 79

Վան-Վասպուրականին ծանոթանալուց հետո Ալեքսանդրը վերադառնում է Հավթվան։ 1885 թ. հունիսին իր ընկերներ Զարեհին և Մարտիրոսին գրած նամակում նա նշում է, որ եղել է Վասպուրականում և գտել է իր գործելու ասպարեզը։ «Ռուսաստանի մեջ ապրուստը,— գրում էր նա,— ինձ համար տաղտկալի ու անտանելի էր, իսկ մյուս կողմից իմ հայրենիք Վասպուրականը քաշում էր ինձ դեպի իրեն»[11]։ Նշում էր այն նեղությունները, որ կրել է իր ձեռնարկության սկզբում, ընկնելով մի անծանոթ իրականության մեջ։ Սակայն, ավելացնում է նա, այժմ լավ է զգում իրեն և երբ հիշում է իր սկզբնական շրջանի կյանքը, ուզում է «թաղել այդ անցյալը»[12]։ Իրականն այն է, որ կյանքի դաժան պայմանները սկզբնական շրջանում նրա մեջ տատանումներ էին առաջացրել, քանի որ մի անգամ քրդերից ծեծվելով նա «համոզվում է, որ կյանքը վեպ չէ և չի կարելի կյանքի մեջ վեպի հերոս դառնալ»[13]։ Սակայն հայրենիքի ազատագրության սուրբ գաղափարը, որին նվիրվել էր ամբողջ էությամբ, նրան ստիպում է տանել ամեն նեղություն և մնալ իր ժողովրդի հետ։

Հավթվանում Ա. Գոլոշյանն աշխատում էր իբրև ուսուցիչ և ամսական 5 թուման էր ստանում. դա շատ քիչ էր և ստիպված դասեր վերցրեց տեղի բողոքականների դպրոցում։ Գյուղացիներին զարմացնում էր այն հանգամանքը, որ նա չի մասնակցում պարապ խոսակցությունների և, երբ բողոքականների մոտ դասեր վերցրեց, գյուղացիների մի մասը սկսեց մտածել, որ նա «անպատճառ բողոքական պիտի լինի»[14]։ Չնայած դրան, Թիֆլիսում ու Մոսկվայում կրթված Ա. Գոլոշյանը մեծ համակրանք էր վայելում գյուղացիների, հատկապես երիտասարդների շրջանում։ Սալմաստում նա հանդիպում է այնտեղ ժամանած Մ. Փորթուգալյանին, որի հետ ծանոթացել էր Վանում։ Վերջինս Ա. Գոլոշյանին խոստանում է տալ 10 երիտասարդ, եթե նա հայդուկային խումբ կազմի։ Շատ չանցած Ա. Գոլոշյանը Վանում էր, որտեղից գնում է Վան, Շատախ, ապա Մուշ։ Զենքի պակասը հնարավոր չի դարձնում հայդուկային խմբի կազմակերպումը և նա նորից վերադառնում է Հավթվան։ 1885 թ. սեպտեմբերի 21-ին Սալմաստից հորը գրած նամակում նա նշում է, որ իր կյանքը պատկանում է հայ ժողովրդին, ապա շարունակում. «Զարմացա քո հետևյալ տողերի վրա. «Հարկավոր է գործ, անգործ, անաշխատող մարդը նման է անբան կենդանուն...

Ես չէի կարծում հայր, որ դու այդպիսի ցած գաղափար ունիս ինձ վրա, մի՞թե դու ինձ գարշելի սրիկա և ավազակ ես կարծում, որ անգործ, անաշխատ ուրիշի հացով է ապրում։ Եվ կամ, եթե ես եկել եմ ազատության համար աշխատելու, մի՞թե կարծում ես, որ ավազակությամբ պիտի սկսեմ գործս և փոխանակ ուղղելու ավելի ևս փչացնենք»[15]։

Ա. Գոլոշյանին վերաբերող նյութերում կան նամակներ այն մարդկանցից, որոնց հետ նա ծանոթացել է Վասպուրականում և Մուշում։ Նամակներից մեկը Խ. Գռուզյանինն է՝ Վասպուրականի Իշխանգոմ գյուղից, որտեղ նա ուսուցիչ էր[16]։ Նամակում Խ. Գռուզյանը նրան անվանում է «աղնվասիրտ բարեկամ», ապա նշում, որ այն երիտասարդները, որոնց հետ նա հանդիպել է, Ա. Գոլոշյանի գաղափարները համարում են մանանա[17]։ Ա. Գոլոշյանի մի նամակից երևում է, որ նա սկսել է գրել «Աշխարհիկ լեզվի քերականություն» և նույնիսկ կեսն ավարտել է։ 1886 թ. հունվարի 4-ին գրած նամակում նա հայտնում է, որ սովորել է թուրքերեն կարդալ և գրել, որ սկսել է ուսումնա-

11 Նույն տեղում, թ. 81։
12 Նույն տեղում։
13 Լեո, նշվ. աշխ., էջ 50։
14 Մլի արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 205։
15 Նույն տեղում, թ. 78։
16 Ե. Տեր-Մկրտչյան, Գանձեր Վասպուրականի, հ. 1, Պոսթոն, 1966, էջ 500։
17 Մլի արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 125։

սիրել պարսկերեն ու ֆրանսերեն լեզուները և ցանկանում է սկսել արաբերենի ուսումնասիրությունը[18]։

1885 թ. հոկտեմբերի 17-ին Սալմաստի Ուլա գյուղից հորը գրած նամակում Ա. Գոլոշյանը նշում է, որ անընդհատ շրջում և շփվում է ժողովրդի հետ։ «Ես ման եմ գալիս,— գրում է նա,— աստանդական, տեղից-տեղ, գյուղից գյուղ, դիտելով հայ գյուղացուն, սովորելով նրա սովորությունները։ Եվ ուր որ գնում եմ, ինձ համար կա գործ բազում։ Մի քանի գյուղերում մինչև անգամ հորդորել եմ բացել դպրոցներ։ Հայոց ժողովրդին սիրողը պետք է ծառա դառնա նրան։ Նյութական վիճակս շատ լավ է։ Այս տարի հինգ ամիս դաս եմ տվել մի օտարազգու և ստացած փողս կարող է երթալ ինձ մի տարի»[19]։ Սալմաստից 1886 թ. հոկտեմբերի 30-ին նա հորը գրում էր, որ ուսուցիչ է, ունի «բազմաթիվ բարեկամներ, գաղափարակիցներ և այցելուներ» և շարունակում է թուրքերեն ու պարսկերեն լեզուների ուսումնասիրությունը։ Այնուհետև նշում է, որ իր ջանքերով և տեղի երիտասարդների օգնությամբ ցանկանում է Հավթվանում 1887 թ. հունվարի 1-ից բացել «Գրասիրական ընկերություն» դրադարանով և ընթերցարանով։ Ապա ավելացնում է, որ ստանում է «Արմենիա» թերթը, որն ունի իր ազատ և անկախ դեմքը և, անշուշտ, նպաստելու է Հայաստանի վերածնությանը։ Այնուհետև գրում է, որ այժմ «ամեն անհատ հայ պարտավոր է աշխատել ազգի համար... Իմ միակ փափագս է,— շարունակում է նա,— իմ պարտքը կատարել առ ազգ և հայրենիք։ Հայ լինինք և հայ։ Օտարին խունկ ծխել, օտարի ծառայության մեջ մնալ, օտարի շունչ քաշել—մի ցանկություն է, որին արժանի է միայն նախատինք և խայտառակություն»[20]։ Նույն թվականի հունվարին Հավթվանից հորը գրած մի այլ նամակում նա հայտնում է, որ Արսեն Թոխմախյանի հետ միասին ցանկանում են Վարդանանց տոնի կապակցությամբ հանդես կազմակերպել[21]։

1887 թ. հուլիսի 19-ին Ա. Գոլոշյանը մեկնում է Թիֆլիս՝ հարազատներին հանդիպելու։ Նա Թիֆլիսում մնում է մեկ տարի։ Գոլոշյանների բնակարանը դառնում է ժամանակի ազգային-ազատագրական հովերով տարված երիտասարդների հավաքատեղի, որոնց մեջ էր նաև Հովհաննես Թումանյանը։ Բանաստեղծի կնոջ՝ Օլգա Թումանյանի վկայությամբ, երիտասարդ պոետն այրվելով արևմտահայերի ազատագրության գաղափարներով, ցանկացել է ընդունել Ա. Գոլոշյանին։ Այդ կապակցությամբ նա գրում է, որ մի օր Հ. Թումանյանը իրեն ասել է. «—Չե՞ս իմանում, Ալեքսանդր Գոլոշյանի հետ որոշել ենք գնալ Տաճկահայաստան, հայրենիքն ազատելու, ես էլ իմ ամառվա վերարկուս ծախեցի, մի ատրճանակ առա, պետք է գնայի։ Մեր նշանվելու պատճառով իմ գնալս հետաձգվեց, իսկ գնացողները սպանվել են ճանապարհին»[22]։ Իրականում, սակայն, միայն նշանվելը չէ, որ հետ է պահել Հ. Թումանյանին։ Բանն այն է, որ այդ օրերին նա հիվանդ գամված է եղել անկողնուն. հայրը, ապա մայրը մեկ ամիս խնամում են որդուն, որից հետո Հ. Թումանյանին տանում են Դսեղ, որտեղ մի քանի ամիս մնալուց հետո նա վերադառնում է Թիֆլիս։ Այդ մասին Հ. Թումանյանն իր կենսագրական նոթերում գրում է. «1886-ուսումնարանից դուրս գալը, հեղափոխ.— Գոլոշյան, հիվանդություն, կոնսիստորիա, ամուսնություն...»[23]։

Հ. Թումանյանը Ա. Գոլոշյանին է նվիրել «Հին կռիվը», «Տանը» և «Երկրում» բանաստեղծությունները. դրանք մի պոեմ են կազմում, որի գլխավոր հերոսը Ա. Գոլոշյանն է[24]։

18 Նույն տեղում, թ. 85։

19 Նույն տեղում, թ. 88։

20 Նույն տեղում, թ. 88։

21 Նույն տեղում, թ. 94։

22 Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 329։

23 Պատմա-բանասիրական հանդես, 1966, № 1, էջ 182։

24 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, Երևան, 1969, էջ 130—135։

Ա. Գրիգորյանի հուշերում տեղեկություններ են պահպանվել Ա. Գոլոշյանի՝ Թիֆլիսում եղած ժամանակաշրջանի գործունեության մասին։ Ըստ այդ հուշերի, Թիֆլիսում (մասնավորապես Ներսիսյան դպրոցում) այդ ժամանակ կային խմբակներ, որոնցից մեկի ղեկավարն էր Հ. Վարդապետրիկյանը։ Նա մի օր հայտնում է, որ Արևմտյան Հայաստանից ու Պարսկաստանից մի երիտասարդ է վերադարձել և ցանկանում է ծանոթանալ տեղի երիտասարդության հետ։ Հանդիպումը կազմակերպվում է քաղաքի Սաղ կոչվող վայրում։ Հուշերի հեղինակը վկայում է, որ Ա. Գոլոշյանը «մաքուր գրական ոճով» խոսում էր Արևմտյան Հայաստանի ու Պարսկաստանի հայերի վիճակի մասին և «խոսելիս երբեմն նրա աչքերը այնպես էին փայլում, կարծես աչքերից շանթ էր արձակում։ Նա խոսեց բավական երկար, նկարագրեց այնտեղ տիրող դրության մասին, գյուղացիների կրած նեղությունը, թալանը, առևանգումը քրդերի և չերքեզների ձեռքով, կառավարության բռնած դիրքը դեպի հայերը և հայերի անելիքը Տաճկաստանի վերաբերմամբ. ամենքն ազդվեցին նրա ասածներից և այդ դրությամբ էլ ցրվեցին»[25]։

Ա. Գրիգորյանի հուշերից երևում է, որ Ա. Գոլոշյանի այս ելույթին հաջորդել են մի քանի այլ ելույթներ։ Նա ծանոթանում է Բաֆֆու հետ և ուրախացած իր ընկերներին հայտնում է. «Ահ, չեք ասում տղերք, ինչու ուրախ եմ այսօր, վերջապես հաջողվեց Բաֆֆու հետ ծանոթանալ...»[26]։ Դրանից հետո նա սկսեց հաճախել վիպասանի բնակարանը, մասնակցել է նրա թաղման արարողությանը։ Այնուհետև Ա. Գոլոշյանը վերադառնում է վիպասանի ծննդավայրը՝ Սալմաստ։ 1889 թ. Հավթվանից հորը գրած նամակում նա բացատրում է, թե ինչն իրեն մղեց դեպի այդ «խելացնոր ու վնասակար վարմունքը»։ Ա. Գոլոշյանը խոստովանում է, որ, տարվելով Բաֆֆիով, նպատակադրվել է իր կյանքը նվիրել Հայաստանի ազատագրության գործին. «Այդ հեղինակի ընթերցումները ներշնչեց մեջս մի վառ ու ազնիվ սեր դեպի ազգ ու հայրենիք, դեպի տառապող հայությունը»[27]։ Հորը գրած այս նամակում նա նշում է, որ Հայաստանում կան «հեղափոխական միություններ, որոնց նպատակն է զենքի ուժով ազատել երկիրը տաճիկներից ու հային ազատություն տալ։ Այդ միությունները մի քանի հատ են և ունեն թե՛ բազմաթիվ անդամներ և թե համակրողներ։ Ես կապված եմ այդ բոլոր միությունների հետ և նրանց գործոն անդամն եմ»[28]։ Նամակի վերջում նա հորը գրում է. «Ես չգիտեմ, թե որքան կհաջողվի մեր նպատակը։ Գուցե մենք ընկնենք շուտով և շատ շուտով, բայց մեր անկումը պիտի այլոց գրգռե և մենք շատերին օրինակ կլինենք մեր գործունեությամբ։ Համոզված եղեք հայր իմ, թրքության կորստի մեջ։ Թուրքիան պիտի ընկնի և տառապյալ Հայաստանը պիտի ոտքի կանգնի, դա մի ճակատագրական գաղափար է, մի իդեալ՝ որի անկասկածելի իրականանալը մոտիկ ապագայում տեսնելու է հայությունը»[29]։

Ա. Գոլոշյանը 1889 թ. փետրվարի 13-ից «Արմենիայում» սկսեց հրատարակել «Նամակներ Հայաստանից» հոդվածաշարը՝ Վ. Հ. (Վարդան Հարությունյան) ստորագրությամբ։ Հոդվածաշարի սկզբում նա նշում է, որ Ռուսաստանի և Եվրոպայի հայերը սկսել են ավելի մոտիկից զբաղվել Հայաստանի հարցով, սակայն նրանք «այն չեն եղել՝ ինչ որ պետք է լինեին»[30]։ Այնուհետև գրում է, թե հայ իրականության մեջ կան մարդիկ, որոնք նպատակ ունեն «գանգատվել, հեծկլտալ, աղաչել Եվրոպային, մուրալ նրանից բարօրություն ու ազատություն Հայաստանին»[31]։ Քսաներեքամյա երիտասար-

25 Մլի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 2—4, թ. 5։
26 Նույն տեղում, թ. 13։
27 Նույն տեղում, ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 122։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում։
30 Արմենիա, 13. II. 1889։
31 Նույն տեղում, 16. II. 1889։

ղը, որը շատ լավ գիտեր արևմտահայության սոցիալական և քաղաքական վիճակը, չէր ընդունում եվրոպական օգնությունը։ Գտնելով, որ հայ ազգը պետք է նպատակադրվի ունենալու իր «ազգային անհատական գոյության ապահովումը», նա նշում է. «յուրաքանչյուր ազգ ձգտում է ապահովել իր քաղաքական ինքնուրույնությունը, ազատ պահել սեփական կյանքը օտարի միջամտությունից և ազդեցությունից և իրականացնել իր քաղաքական ու հասարակական իդեալները»[32]։ Սակայն կան ազգեր, շարունակում է նա, նկատի ունենալով Թուրքերին, որոնք ձգտում են իրենց բարօրությունը և երջանկությունն ապահովել «դրացու հաշվով», միայն ու միայն տվյալ ազգի անկման հաշվին։ Նա գտնում է, որ Թուրքիան ապագայում էլ աշխատելու է «իր ազգի ինքնուրույն գոյության ապահովության համար, ջանալու է ոչնչացնել իրան վնասակար ձգտումներով տոգորված թշնամիներին»[33]։ XIX դ. ընթացքում ազատագրական պայքարի միջոցով Թուրքիայից ազատագրվեցին և անկախ պետություններ դարձան Հունաստանը, Սերբիան, Ռումինիան, Բուլղարիան։ Շատ բնական է, նշում է «Նամակներ Հայաստանից» հոդվածաշարի հեղինակը, որ Թուրքիան կճգնի ճնշել բոլոր այն հպատակ ազգերին ու ժողովուրդներին, որոնք «ազատ ապրելու ցանկություն» են հայտնելու։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայերի մեջ թափ ստացավ «վերածնության փափագը», որը պատերազմից հետո հասցրեց նրան, որ Կաբինում հրապարակ եկավ, Ա. Գոլոշյանի խոսքերով ասած, «Հիշատակի արժանի ընկերությունը»։ Թուրքիան համոզվեց, որ հայերի մեջ գոյություն ունի «մի ապստամբական շարժում, իրան վտանգավոր ապրելու ձգտում»[34]։ Հայերի ազատագրական ճիգերը ճնշելու նպատակով նա սկսեց հայաշատ վայրերը բնակեցնել լազերով ու չերքեզներով։ Միաժամանակ, Թուրքական կառավարությունը սկսեց ծանրացնել հարկերը և անպատիժ թողնել քրդերի «բռնաբարություններն ու վայրենությունները», նրանց թույլատրեց զենք կրել, իսկ հայերին պատժել՝ նրանց մոտ զենք հայտնաբերելու դեպքում։ Թուրքիայում հալածվում են հայկական դպրոցների ուսուցիչները, խիստ հսկողություն է սահմանված դպրոցների վրա, «անպատիժ անարգվում են կրոնքն ու եկեղեցին»։ Օսմանյան պետության մեջ պաշտոնի են առաջ քաշվում անբարոյականացած մարդիկ, իսկ հայերից կառավարությունը խրախուսում է «ցածերին և մատնիչներին»[35]։ Ըստ Ա. Գոլոշյանի, Թուրքիան ճնշում է հայերին, քանի որ եթե նրանք վերածնություն ապրեն, կկորցնի իր «ամենագեղեցիկ և շահավետ գավառները»։ Այդ պատճառով էլ Թուրքիայի «ամենածանր հոգսերից մեկը հայկական խնդիրն է»[36]։ Ա. Գոլոշյանը եզրակացնում է, որ «քանի Թուրքիան ճգնում է մեր ազգային կյանքը ապականել և մեր ինքնուրույն գոյության վիհը փորել, մենք ևս պետք է աշխատենք բոլոր ուժը ի գործ դնել այդ ճիգերը ի դերև հանելու համար»[37]։ Սակայն ի՞նչ պետք է անի հայ ժողովուրդն ըստ Ա. Գոլոշյանի. «Ա. Թուրքիան մեզ վրա գործ է դնում միայն այն միջոցները, որոնք նրա կարծիքով, կարող են ապահովել իր քաղաքական ինքնուրույն գոյությունը և հայությունը ճնշել, ստրկացնել և թմրեցնել։ Բ. Թուրքիան մրցում է մեր դեմ, մենք ևս պետք է մրցենք, եթե ուզում ենք, որ հայությունը մնա աշխարհում անկորուստ։

Եվ Գ. մրցում ազգային անհատական գոյության համար՝ չէ լալ, կոծել, գանգատվիլ և պոռպոռալ»[38]։

---

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, 16. II. 1889։

36 Նույն տեղում, 20. II. 1889։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում, 1889։

Հոդվածաշարի վերջին մասը լույս տեսավ 1889 թ. հուլիսի 20-ին, երբ Ա. Գոլոշյանն այլևս չկար։ Հոդվածում նկարագրված է ժողովրդի քաղաքական ու տնտեսական ծանր կացությունը։ Այդ վիճակից ելնելու համար, նկատում է Ա. Գոլոշյանը, ժողովուրդը դիմում է պանդխտության, նա ընկած է «վաշխառու մահտեսների և էֆենդիների ձեռքը», որի պատճառով «անհամար գյուղերի բնակչության կեսը համարյա պարտատերեր են»[39]։

Սալմաստ վերադառնալուց հետո Ա. Գոլոշյանը ծանոթանում է վանեցի Հ. Ագրիպասյանի (1866—1889) հետ, որի հորը սպանել էին քրդերը։ Դեռ վաղ հասակից այդ երիտասարդը, ականատես լինելով իր ժողովրդի տառապանքներին, վրեժով էր լցվել թուրք և քուրդ հարստահարողների նկատմամբ։ Ա. Գոլոշյանի և Հ. Ագրիպասյանի հետ այն ժամանակ Սալմաստում ուսուցչություն էր անում նաև Կ. Գուլակսզյանը։ Այս երեքը 1889 թ. որոշում են անցնել Վան և հայդուկային խումբ կազմել։ Մեկնելուց առաջ Ա. Գոլոշյանն ընկերներին ասում է. «Ճիշտ է, որ մեր այժմյան բռնած ընթացքը հանդուգն է, վտանգավոր, սակայն հեղափոխական կյանքը և շատ անգութ և շատ քաղցր է, նա շատ զոհեր է պահանջում, չպետք է վախենալ, անվախ մտնել հեղափոխական գործի մեջ հանուն մի ամբողջ ստրկացած ժողովրդի։ Մեր մահից հետո 2—3 մայրեր պիտի ողբան և կոծին, բայց այսքան պտտվեցինք, այդ որբ մնացած երկիրը տեսանք, թե քանի տասնյակ հազարավոր մայրեր, հայրեր հեծում, այրվում, խորովվում են անգութ տաճկի կրունկի տակ։ Մենք գուցե մեռնենք չարաչար մահով, հոգ չէ գոնե մեզանից հետո եկողների ճանապարհը կը հեշտանա»[40]։

Երբ նրանք շարժվեցին դեպի Վան, Զուխ Կետիկ (Գյադուկ) վայրում շրջապատվեցին թուրքական և քրդական զինված ուժերի կողմից։ Անհավասար կռվում Ա. Գոլոշյանն ու Հ. Ագրիպասյանը ընկան, իսկ Կ. Գուլակսզյանին հաջողվեց ազատվել։ «Արմենիան» տպագրեց «Զուխ կետյուքի պատմությունը, բուն իսկ Գուլակսզյանե պատմված» հոդվածը, որի մեջ ճշտիվ տրված է այդ կռվի պատմությունը։ Այդ առիթով հոդվածներ տպվեցին նաև «Նոր դար», «Արձագանք», «Արևելք» և այլ թերթերում։ Թուրքական մամուլը ևս այդ կռվի մասին տպագրեց հոդվածներ, որոնցում, սակայն, ճիշտ չէր արտացոլված եղելությունը։ Դրանցից մեկում, որը թարգմանաբար տպագրել էր «Արևելքը», Վանի փաշան կեղծելով իրավիճակը, իշխանություններին հայտնել էր, թե իբր «ավազակները» եղել են 8 հոգի, որից 6-ը փախել են, իսկ 2-ը՝ սպանվել։ Փաշան այդ տեղեկություններից հետո կառավարությունից շքանշան ստացավ։

Զուխ Կետիկում զոհված երկու երիտասարդների մասին հետագայում գրվեցին բանաստեղծություններ, հոդվածներ, գրքեր։ Յուրաքանչյուր տարի նշվում էր նրանց մահվան տարեդարձը։ Հավթվանի դպրոցը կոչվեց Ա. Գոլոշյանի անունով։ Ա. Գոլոշյանի կյանքի վերջին տարիները ժամանակակիցները համարել են սխրանք և, իրավացի է Ա. Ինճիկյանը, նրան համարելով «Հայ ազգային-ազատագրական շարժման ռահվիրաներից մեկը»[41]։

АЛЕКСАНДР ГОЛОШЯН

А. М. ПОГОСЯН

Резюме

А. Голошян родился в Тифлисе в 1867 г. Здесь он учился в школе Нерсисян, а потом в гимназии. Затем он продолжил учебу в Лазарев-

39 Նույն տեղում, 20. VII. 1889։

40 Մլի արխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 45, թ. 217։

41 Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 142։

ском институте. Вернувшись в Тифлис, 16-летний Голошян оставляет семью и едет в село Автван Салмастского р-она Персии, где учительствует в сельской школе. Здесь он организует «Гркасернери миутюн» («Союз любителей книги»), который имел свою библиотеку и читальню.

Побывав в Ване и Шатахе, А. Голошян сам стал свидетелем того невыносимого социально-политического положения, в котором находились западные армяне. Вернувшись в Салмаст, он развернул деятельность по освобождению своего народа от турецкого ига. Голошян решил организовать и поднять на борьбу против турецких и курдских поработителей гайдуков, однако был убит турецкими жандармами.